ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/30

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Ա/Ձ Կարապետ Հայկարամի Ստեփանյանի ներկայացուցիչ

Մ. Խաչատրյանի (լիազորագիր՝ տրված 18.05.2021թ.),

քննելով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/56» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Ա/Ձ Կարապետ Հայկարամի Ստեփանյանի կողմից 12.05.2021թ. ներկայացված (12.05.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/30 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>Ա/Ձ Կարապետ Հայկարամի Ստեփանյանի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Ա/Ձ Կարապետ Հայկարամի Ստեփանյանը (հետայսու նաև՝ Մասնակից) 12.05.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար՝ «ԱՎՏՈՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ» ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/56 ծածկագրով գնանշման հարցում:

Ընթացակարգի հրավերը www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է՝ 06.05.2021թ., ժամը 18:54:

Ընթացակարգով հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել՝ 13.05.2021թ. ժամը 11:00 (ըստ www. gnumner.am՝ հրապարակված տեղեկատվության):

Ընթացակարգի հրավերով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնությագիրը.

5. ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ

Ավտոմեքենաների պահեստամասերի գնման դեպքում, մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի սույն հրավերով սահմանված պահեստամասերի յուրաքանչյուր տեսակի մատակարարման միավոր առավելագույն գների հանրագումարը, նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում ավտոմեքենաների պահեստամասերի մատակարարման դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի պահեստամասերի մատակարարման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն պահեստամասերի մատակարարման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն առանձին տեսակի պահեստամասերի մատակարարման առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատակարարված պահեստամասերի քանակն է

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի									
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ	անվանումը	Տեխ. բնութագիրը	Հ/Մ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
							հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***

	դասակարգ ման (CPV)								
	34331300/4	*Ավտոմեքեն աների պահեստա մասեր*	Տես Հավելված 1.1	հատ		1	Երևան, կի 3-րդ . N 6	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2021թ.

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

*Ավտոմեքենաների պահեստամասերի մատակարարումը կատարվում է Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման՝ ԱԻՆ ԹՆԱ վարչության կողմից տրամադրված հայտերի և Կատարողի կողմից ներկայացված արատավորման ակտերի հիման վրա՝ ԱԻՆ ԹՆԱ վարչության կողմից հաստատվելուց հետո, առավելագույնը 20 օրյա ժամկետում:

Կատարողի կողմից տրվում է 6 ամիս կամ 10000կմ երաշխիք փոխարինված դետալների համար:

Ստորև ներկայցնում եմ հրավերի հավելված 1.1 ում 29-ի անուն մեքենաների մակնիշները և ըստ մակնիշների 48114 անուն քանակները (ներառյալ՝ նորոգման աշխատանքներ) որոնք արհեստականորեն խմբագրված են 1 չափաբաժում.

1. Mitsubishi Fuso Canter /հատուկ, փրկարարական/ավտոմեքենաների ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ -349 անուն պահեստամաս

2. ISUZU N-Series /հատուկ, փրկարարական/ավտոմեքենաների ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ - 370 անուն պահեստամաս

3. Renault B110 /հատուկ, փրկարարական/ավտոմեքենաների ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ - 349 անուն պահեստամաս

4. Ford E series (Econoline) /հատուկ, փրկարարական/ավտոմեքենաների ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ - 349 անուն պահեստամաս

5. Isuzu C series /հրշեջ, ավտոսանդուղք, փրկարարական/ավտոմեքենաների ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ 370 անուն պահեստամաս

6. Iveco Magirus /ավտոսանդուղք, ջրատար/ավտոմեքենաների ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ

7. Renault JP1A /հրշեջ, փրկարարական/ավտոմեքենաների ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ 370 անուն պահեստամաս - 370 անուն պահեստամաս

8. ԳԱԶ-53/66 ավտոմեքենայի (իր մոդիֆիկացիաներով) ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ -1895 անուն պահեստամաս

9. ՈՒՐԱԼ մակնիշի ավտոմեքենայի (իր մոդիֆիկացիաներով) նորոգման պահեստամասերի անվանացանկ -10889 անուն պահեստամաս

10. Краз-255, Ավտոկռունկ МАЗ-КС3577, Ջրատար МАЗ-5334 ավտոմեքենաների ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ 370 անուն պահեստամաս

11. Կամազ ավտոմեքենայի (իր մոդիֆիկացիաներով) ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ - 23413 անուն պահեստամաս

12. FORD Transit 350, OPEL Vivaro, IVECO Daily, MERCEDESS Sprinter; CHEVROLET C3500 ԳԾՊԾ, NISSAN Urvan, Volkswagen Transporter ավտոմեքենաների ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ-515 անուն պահեստամաս

13. Toyota Land cruiser 100-200; Nissan Patrol; Toyota Hilux, ավտոմեքենաների ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ-536 անուն պահեստամաս

14. Գազել, Գազել բիզնես մակնիշների (իր մոդիֆիկացիաներով) հրշեջ և փրկարարական ավտոմեքենաների ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ և նորոգում - 356-պահեստա-աս'(ներառյալ նորոգման աշխատանքն

15. ISUZU F-Series /հրշեջ, ավտոսանդուղք, փրկարարական/ ավտոմեքենաների ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ- 370 անուն պահեստամաս

16. Mercedes MB 1113 փրկարարական ավտոմեքենաների ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ-370 անուն պահեստամաս

17. Renault S180 ավտոսանդուղք ավտոմեքենաների ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ-361 անուն պահեստամաս

18. Steyr 790 /հրշեջ, փրկարարական/ ավտոմեքենաների ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ-370 անուն պահեստամաս

19. Volvo SL6 փրկարարական ավտոմեքենաների ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ-370 անուն պահեստամաս

20. Mercedes Unimog-Unicum /հրշեջ, փրկարարական/ ավտոմեքենաների ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ-370 անուն պահեստամաս

21. Peugeot 233)22 փրկարարական ավտոմեքենաների ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ-370 անուն պահեստամաս

22. ԳԱԶ 31 ավտոմեքենայի (իր մոդիֆիկացիաներով) ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ 476 անուն պահեստամաս

23. ՈՒԱԶ ավտոմեքենայի (իր մոդիֆիկացիաներով) ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ -408 անուն պահեստամաս

24. ՈՒԱԶ պատրիոտ ավտոմեքենայի (իր մոդիֆիկացիաներով) ընթացին նորոգման պահեստամասերի անվանացանկ -408 անուն պահեստամաս

25. ՎԱԶ 2106 /2107 ինժ. / ավտոմեքենայի (իր մոդիֆիկացիաներով) ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ 365 անուն պահեստամաս

26. ՎԱԶ 2121 /21214/ Նիվա ավտոմեքենայի (իր մոդիֆիկացիաներով) ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ -476 անուն պահեստամաս

27. Neoplan Bova, Scania K124, Foton ավտոբուսների ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ- 370 անուն պահեստամաս

28. ՊԱԶ 672 ավտոմեքենայի (իր մոդիֆիկացիաներով) ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ - - 267 անուն պահեստամաս

29. ԶԻԼ ավտոմեքենայի (իր մոդիֆիկացիաներով) ընթացիկ նորոգման պահեստամասերի անվանացանկ 2262 անուն պահեստամաս

«ԱՎՏՈՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐ»-ը ոլորտային առումով, նշանակությամբ, տեխնիկական բնութագրերով խիստ տարբեր են, սակայն արհեստականորեն խմբավորված են մեկ չափաբաժնում. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետի ակնհայտ խախտում՝ (արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում):

Հրավերով մասնակցից պահանջվում է նաև տեղեկավություն «իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 1-ին մասի 4.3 կետի 7-րդ ենթակետով նախատեսված՝ հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) ռեսուրսների օգտագործման մասին հայտարարություն՝ համաձայն հավելված N 1.2-ի». ինչն ապրանքի ձեռբերման պարագայում չի կիրառվում:

Ավտոմեքենաների պահեստամասերի համար սահմանված միավորների նախահաշվային գները տրոհել բաժինների և սահմանել անհասկանալի առավելագույն միավորի գին հասկացողությունը:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2- րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ հետևյալ կարևոր փաստերը. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

2. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրում ենք այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական կազմվել է Օրենքի 13-րդ հոդվածի պահանջների խախտմամբ, հստակ չէ, գնային առաջարկի համար սահմանված են անհասկանալի և ոչ անկալելի նորմեր (վերոհիշյալի մասով ավելի մանրամասն հիմնավորումներ կներկայացվեն բողոքի քննությանը նվիրված նիստի ժամանակ):

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար «ԱՎՏՈՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐ»-Ի ձեռքբերման նպատակով հայտարարված ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/56 գնանշման հարցման մրցույթի գնահատող հանձնաժողովը Ընթացակարգի հրավերը կազմել է Օրենքի 13-րդ հոդվածի պահանջների խախտմամբ, ինչն էլ իր հերթին հանգեցնելու է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքի խախտմանը, ինչպես նաև զրկել մասնակիցներին Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված գնման մասնակցելու իրավունքի արդյունավետ իրականացման գործընթացին հնարավորությունից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման...»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Մասնակիցը խնդրել է պարտավորեցնել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/56» գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունելու որոշում՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/56» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ, գնման առարկա հանդիսացող «ԱՎՏՈՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐ» չափաբաժինը տրոհելու առանձին չափաբաժինների և հստակեցնելու մատակարարվող յուրաքանչյուր ապրանքատեսականու քանակը:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2021/30 բողոքի քննության նպատակով 19.05.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է բողոքը:

2. <u>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 20.05.2021թ թիվ 01/07.3/2531-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 2021թ-ի կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/56 ծածկագրով գնման ընթացակարգը, ինչպես նաև ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման, սննդամթերքի ապահովման, համակարգչային սարքերի սպասարկման և վերանորոգման ծառայությունների գնման ընթացակարգերը, իրականացվել են հաշվի առնելով յուրաքանչուր անվանատողի միավորի առավելագույն գների հանրագումարը, այն պարզ տրամաբանությամբ, որ Պատվիրատուն չի կարող կանխատեսել, թե տարվա ընթացքում իր տրանսպորտային միջոցներից որն ավելի շատ կշահագործվի կամ մեքենաների որ պահեստամասը շարքից դուրս կգա ավելի հաճախ, որ տպիչ սարքը ավելի հաճախ կլիցքավորվի կամ կսպասարկվի, արտակարգ պատահարների ժամանակ սննդամթերքի ինչ քանակ կպահանջվի, համակարգչային տեխնիկայի որ մասը երբ շարքից դուրս կգա և այլն: Սպառման նմանօրինակ բնույթ ունեցող բոլոր ապրանքների, աշխատանքների և

ծառայությունների գնումները տարիներ շարունակ բոլոր պատվիրատուների կողմից իրականացվել են վերը նշված ձևաչափով, որը թույլ է տալիս պատվիրատուին առավել արդյունավետ տնօրինել պետական բյուջեով նախատեսված սահմանափակ ֆինանսական միջոցները՝ կատարողից հայտերի միջոցով պահանջելով տվյալ ժամանակահատվածում անհրաժեշտ պայմանագրով նախատեսված գնման առարկաներից մեկը կամ մի քանիսը:

Ա/Ձ Կարապետ Հայկարամի Ստեփանյանի այն պնդումը, որ ավտոպահեստամասերը ոլորտային առումով, նշանակությամբ և տեխնիկական բնութագրով տարբեր են՝ խիստ սուբյեկտիվ է, քանի որ նույն տրամաբանությամբ խիստ տարբեր կարելի է համարել նաև միևնույն նշանակության և միևնույն մակնիշի ավտոմեքենայի տարբեր պահեստամասեր՝ թափքի մասեր, անվադողեր, շարժիչի կամ փոխանցման տուփի մասեր, ընթացային մասեր, էլեկտրական տվիչներ և պահանջել առանձնացնել պահեստամասերը ըստ անվանումների:

Ա/Ձ Կարապետ Հայկարամի Ստեփանյանի դիմումում մեջբերված «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդվածները՝ մասնակիցների շրջանակի ընդլայնման, մրցակցության խրախուսման, գնման առարկայի նկարագրի ամբողջական և հստակ լինելու վերաբերյալ ավելորդ են և անհիմն, քանի որ պատվիրատուն չի խախտել «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդվածներից որևէ մեկը:

Պատվիրատուի՝ Արտակարգ իրավիճակների նախարարության պատասխանատու ստորաբաժանումը՝ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչությունը, ավտոպահեստամասերի գնման հայտը նախագծելիս սահմանել է մեկ չափաբաժին, որը ներառում է տարբեր ավտոմեքենաների տարբեր պահեստամասեր՝ գնման գործընթացի արդյունավետությունը ապահովելու նպատակով, քանի որ չունի բյուջեով հաստատված բավարար ֆինանսական միջոցներ, ինչը թույլ կտար սահմանել ավտոպահեստամասերի մի քանի չափաբաժիններ՝ ըստ տեսակի կամ մակնիշի, նշելով կոնկրետ քանակներ և մատակարարման ժամկետներ: 2021թ-ի բյուջեով ավտոպահեստամասերի գնման համար նախատեսված միջոցների շրջանակում առանձնացված չափաբաժիններով գնման ընթացակարգի իրականացմամբ բնականաբար կարող են կնքվել մի քանի գնման պայմանագրեր: Սահմանափակ ֆինանսական միջոցների առկայության դեպքում ավտոպահեստամասերի գնման տարբեր պայմանագրերի շրջանակներում չեն կարող իրականացվել մատակարարումներ՝ միևնույն համամասնությամբ և պարբերականությամբ, հետևաբար, մի չափաբաժնի մինչև

տարեվերջ սպառումը կամ մյուսի չօգտագործված մնացորդ ունենալը լուրջ խոչընդոտներ են առաջացնում հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների անսարքությունները հնարավոր սեղմ ժամկետում վերացնելու գործընթացում, քանի որ գնումների օրենսդրությունը թույլ չի տալիս ողջամիտ ժամկետում տարբեր մատակարարների հետ կնքված պայմանագրերի փոփոխություններ իրականացնել՝ նվազեցնելով մեկի և ավելացնելով մյուսի պայմանագրային գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատվիրատուն կարող է բավարարել Ա/Ձ Կարապետ Հայկարամի Ստեփանյանի նման մասնակիցների ցանկությունը միայն համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում, ըստ տեսակների և մոտավոր քանակների ավտոպահեստամասերի բազում չափաբաժիններով տարբեր ընթացակարգեր հայտարարելով, ինչը թույլ կտա Ա/Ձ Կարապետ Հայկարամի Ստեփանյանին մասնակցել իր կողմից արտադրվող կամ ներմուծվող կոնկրետ պահեստամասի գնման ընթացակարգին»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2021/30 բողոքի քննության նպատակով 19.05.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/30 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/30 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/56» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Համաձայն Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1-ին կետի 1.1 ենթակետի՝ գնման առարկա է հանդիսանում Արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար՝ ավտոպահեստամասերի ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ապրանք), որոնք խմբավորված են 1 չափաբաժնում:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Ա/Ձ Կարապետ Հայկարամի Ստեփանյանի 12.05.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածը սահմանում է՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝

1. Մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է՝

1) մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով.

2) փոփոխել պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը:

2. ***<u>Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը</u>***:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Այսպես՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/56» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Տեխնիկական բնութագիր
1	Ավտոմեքենաների պահեստամասեր	Տես Հավելված 1.1

Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի Հավելված 1.1-ով՝ գնման ժամանակացույց և տեխնիկական բնութագրով, սահմանվել է հետևյալը.

N	Գնման առարկայի անվանումը	Տեխնիկական բնութագիր
1	Mitsubishi Fuso Canter /հատուկ, փրկարարական/ ավտոմեքենաների պահեստամասեր	Համաձայն գործարանային նորոգման և շահագործման ձեռնարկների, ուղեցույցների
	Isuzu N series /հատուկ, փրկարարական/ ավտոմեքենաների պահեստամասեր	
	Renault B110 /հատուկ, փրկարարական/ ավտոմեքենաների պահեստամասեր	
	Ford E series /հատուկ, փրկարարական/ ավտոմեքենաների պահեստամասեր	
	Isuzu C series /հրշեջ, ավտոսանդուղք, փրկարարական/ ավտոմեքենաների պահեստամասեր	
	Iveco Magirus /ավտոսանդուղք, ջրատար/ ավտոմեքենաների պահեստամասեր	
	Renault JP1A /հրշեջ, փրկարարական/ ավտոմեքենաների պահեստամասեր	

	ԳԱԶ 66 /հատուկ, փրկարարական/ ավտոմեքենաների պահեստամասեր	
	Ուռալ /հատուկ, փրկարարական/ ավտոմեքենաների պահեստամասեր	
	Ավտոկռունկ Կրաз-255, Ավտոկռունկ ՄԱЗ-КС3577, Ջրատար ՄԱЗ-5334 ավտոմեքենաների պահեստամասեր	
2	ԿԱՄԱԶ մակնիշների հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների պահեստամասեր (Հավելված N1.1, 1.2)	Համաձայն գործարանային նորոգման և շահագործման ձեռնարկների, ուղեցույցների
3	FORD Transit 350, OPEL Vivaro, IVECO Daily, MERCEDESS Sprinter; CHEVROLETC3500 ԳԾՊԾ, NISSAN Urvan, Volkswagen Transporter ավտոմեքենաների պահեստամասեր	Համաձայն գործարանային նորոգման և շահագործման ուղեցույցների և ձեռնարկների (Հավելվածներ 1-1-ից 1-6)
	Toyota Land cruiser 100-200; Nissan Patrol; Toyota Hilux ավտոմեքենաների պահեստամասեր	
	ԳԱԶել բոլոր տեսակների ավտոմեքենաների պահեստամասեր	
4	ISUZU F-Series /հրշեջ, ավտոսանդուղք, փրկարարական/ ավտոմեքենաների պահեստամասեր	Համաձայն գործարանային նորոգման և շահագործման ձեռնարկների, ուղեցույցների
	Mercedes MB 1113 փրկարարական ավտոմեքենաների ընթացիկ նորոգում	
	Renault S180 ավտոսանդուղք ավտոմեքենաների պահեստամասեր	
	Steyr 790 /հրշեջ, փրկարարական/ ավտոմեքենաների պահեստամասեր	
	Volvo SL6 փրկարարական ավտոմեքենաների պահեստամասեր	
	Mercedes Unimog-Unicum /հրշեջ, փրկարարական/ ավտոմեքենաների պահեստամասեր	
	Peugeot 233J22 փրկարարական ավտոմեքենաների պահեստամասեր	
5	ԳԱԶ-31, ինժ., բոլոր տեսակների ավտոմեքենաների պահեստամասեր	Համաձայն գործարանային նորոգման և շահագործման ուղեցույցների և ձեռնարկների (Հավելվածներ 1-1-ից 1-10)
	NISSAN Sentra, Toyota Corolla, MERCEDES E-Class, Renault Logan, HOVER SUV, Chevrolet Niva, Mitsubishi Outlander, KIA Sorento, Hyundai Tucson ավտոմեքենաների պահեստամասեր	
	ՈՒԱԶ-31512, ՈՒԱԶ-315195 ինժ, ՈՒԱԶ-315142, ՈՒԱԶ-3303, ՈՒԱԶ-3741, ՈՒԱԶ-390995, ՈՒԱԶ-452, ՈՒԱԶ-31519, ՈՒԱԶ Պատրիոտ 3163-105 ավտոմեքենաների պահեստամասեր	
	ՎԱԶ-2106 - 2107 ինժ ավտոմեքենաների պահեստամասեր	
	ՎԱԶ-2121 և ՎԱԶ-21214 ավտոմեքենաների պահեստամասեր	
6	Նեոպլան, Բովա, Սկանիա 1990-2000, Steyr մակնիշների ավտոբուսների պահեստամասեր	Համաձայն գործարանային նորոգման և շահագործման ձեռնարկների, ուղեցույցների (Հավելվածներ 1-1-ից 1-6)
	ՊԱԶ մակնիշի ավտոբուսի պահեստամասեր	
	ԶԻԼ մակնիշների հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների պահեստամասեր	

Այսպիսով՝ անդրադառնալով Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված գնման առարկային՝ «Ավտոմեքենաների պահեստամասեր», հարկ եմ համարում արձանագրել, որ Հավելված 1.1-ի՝ տեխնիկական բնութագրի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ Պատվիրատուն, մեկ չափաբաժնով որպես գնման առարկա նախատեսելով «Ավտոմեքենաների պահեստամասեր», նկատի է ունեցել թվով 24 և ավել մակնիշի, մոդելի, տարբեր երկրների արտադրության, տարբեր բնութագրեր ունեցող և տարբեր նշանակության ավտոմեքենաների պահեստամասեր՝ այդ կերպ արհեստականորեն սահմանափակելով հնարավոր մասնակիցների շրջանակը և նրանց միջև մրցակցության հնարավորությունը, որի արդյունքում Պատվիրատուն խախտել է Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պահանջները:

Միևնույն ժամանակ, անդրադառնալով Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերը կազմելիս վերը շարադրված չափաբաժնի մասով որոշմամբ արձանագրված խախտմանը, հարկ եմ համարում արձանագրել, որ Պատվիրատուն իր կողմից

ներկայացված դիրքորոշմամբ չի հիմնավորել իրարից տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող գնման առարկաների՝ մեկ չափաբաժնում խմբավորելը, այսինքն՝ ***<u>Պատվիրատուի կողմից խախտվել է նաև Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը, այն է՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:</u>***

Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից վկայակոչված այն փաստական հանգամանքին, որ Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ ավտոմեքենաների պահեստամասերի գնման դեպքում մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով սույն հրավերով սահմանված պահեստամասերի յուրաքանչյուր տեսակի մատակարարման միավոր առավելագույն գների հանրագումարը՝ նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում ավտոմեքենաների պահեստամասերի մատակարարման դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝ (…), հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

Կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ***<u>ծառայությունների գնման դեպքում,</u>*** հրավերով սահմանվում է նաև ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գինը, իսկ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով այդ առավելագույն գների հանրագումարը՝ նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ (…):

Այսինքն՝ վերը շարադրված իրավական նորմից հետևում է, որ վճարումները բանաձևով իրականացվում են ծառայությունների գնման դեպքում, մինչդեռ Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերով որպես գնման առարկա նախատեսված է ապրանք, այն է՝ ավտոմեքենաների պահեստամասեր (CPV՝ 34331300/4), ուստի հարկ եմ համարում արձանագրել, որ Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերով վճարումները բանաձևով իրականացնելու պահանջ սահմանելն իրավաչափ չէ:

Այսպիսով՝ ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընթացակարգը պետք է հայտարարվի չկայացած և հետագայում տվյալ գնման առարկայի ձեռքբերման նպատակով կազմակերպվելիք Ընթացակարգի հրավերում մեկ չափաբաժնում որպես մեկ գնման առարկա խմբավորված ապրանքատեսակները պետք է տրոհվեն առանձին

չափաբաժինների, որպիսի պայմաններում Ընթացակարգին մասնակիցների շրջանակը կընդլայնվի, ինչն էլ իր հերթին կհանգեցնի մրցակցության ապահովմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ա/Ձ Կարապետ Հայկարամի Ստեփանյանի կողմից 12.05.2021թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1.Պարտավորեցնել «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/56» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին Ընթացկարգը հայտարարել չկայացած:

2. Բողոքի պահանջը մնացած մասով մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**